

ներուն մէջ՝ զանոնք աղանդաւորներ կոչելով եւ հարազատ եկեղեցիին լքողներ նկատելով, ինչպէս որ իրենք ալ, իրենց կարգին, նոյնը կը կոչուէին հակառակորդներէն: Անոնք Սուպահին ամբաստանեցին նաեւ, որ Պապէն դրամ է ստացած, Յիսուսեաններու միջնորդութեամբ է իր պէրաքը ձեռք բերած եւ անոնց հետ դաւակցութեամբ կը ձգտի հայերը իրենց հաւատքէն մոլորեցնել, ինչպէս ե՛ւ ընտանիքներու խաղաղութիւնը խանգարել եւ խղճի ազատութիւնը բռնաբարել, մինչդեռ այդ ազատութիւնը Դունէն տըրուած է բոլոր անոնց, որոնք իր իրաւասութեան տակ կ'ապրին: Մէկ խօսքով՝ անոնք (Սուպահի հակառակորդները) ամէն բան ըրին իր կուսակցութիւնը եւ զինքը կարելի եղածին չափ դարչնելի ցոյց տալու իրեններուն եւ Դրան: Եփրեմ, որ առաջնորդ կամ եպիսկոպոս էր Ա. Պոլսոյ, ուղղափառ եկեղեցւոյն հանդէպ իր եռանդը աւելի ցայտուն ցոյց տալու համար, (ուղղափառ կը կոչէր հայ եկեղեցւոյն այն մասը, որ յարատեւօրէն մնացին իրենց հին վարդապետութեան եւ իրաւանց մէջ) զրեց տեսակ մը հաւատամք, կամ հաւատքի խոստովանութիւն, որուն մէջ Քաղկեդոնի ժողովը իբր հերձուած պարտադրեց, եւ Պապը նզովեց եւ իր եկեղեցւոյն երեք քահանաները արտաքսեց, որովհետեւ մերժեցին ստորագրել: Ընդհակառակը, Սուպահի Պապին նամակ մը գրած էր, որուն մէջ կ'ընդունէր այդ ժողովին ուղղափառութիւնը եւ նորին սրբութիւնն ալ Պատրիարքաց Պատրիարք եւ յայտնի գլուխ տիեզերական ու ճշմարիտ Կաթողիկէ եկեղեցւոյն»<sup>17</sup>):

Հոս յիշուած Եփրեմը Ղափանցիին է, որ Նղիազար Այնթապցի Կաթողիկոսէն 1683-ին Կ. Պոլիս էջմիածնայ նուիրակ զրկուած էր: Եփրեմ՝ 1684 Օգոստոս 15-ին՝ Սուլթանին հրովարտակով Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք կ'ըլլայ: «Բընութեամբ խիստ եւ ուղղութեամբ անա-

չառ հայադաւան» էր կ'ըսէ Օրմանեան (Ազգապատում, էջ 2640): Կարճ եղաւ Եփրեմի պատրիարքութիւնը: Գահնկէց ըլլալէ վերջ, սակայն, շարունակեց խառնուիլ ժամանակուան հակակաթողիկ գործերուն: Երբ մեր ուղեգիրը անոր մասին կը գրէ, Եփրեմ Ա. Պոլսոյ մէջ իբր առաջնորդ կը պաշտօնավարէր, իսկ Կ. Պոլիս պատրիարք էր Մելքիսեդեկ Սուպահին: Ա. Պոլսոյ երեք քահանաները կաթողիկ քարոզչութեամբ կ'ամբաստանուին: Եփրեմ կը ջանայ զանոնք ուղղութեան բերել, սակայն չյաջողելով զանոնք եկեղեցիէն եւ Ա. Պոլսէն կ'արտաքսէ եւ Կ. Պոլիս Մելքիսեդեկին կը զրկէ, որուն մէջ զպողէ մը աւելի պաշտպան մը կը գըտնեն անոնք:

Իսկ յիշուած Սարգիսը Էֆմէֆնին է, որ պատրիարք եղաւ 1679-80-ին:

Հոս Եփրեմի մասին կը յիշուի որ «զրեց տեսակ մը հաւատամք, կամ հաւատքի խոստովանութիւն, որուն մէջ Քաղկեդոնի ժողովը իբր հերձուած դատապարտեց, եւ Պապը նզովեց», — բան մը, որ այլուստ չի յիշուիր, ինչպէս չի յիշուիր թէ Ա. Պոլսոյ երեք քահանաներու դէմ բռնած իր ընթացքը դրոշուած էր, որովհետեւ երեք քահանաները կը «մերժեն ստորագրել» Եփրեմի հակակաթողիկ այդ յայտարարութիւնը:

Ուղեգրին համաձայն Մելքիսեդեկ Սուպահին արդէն կաթողիկացած էր նամակով, Հոովմ Պապին ուղղեալ, եւ Պապէն ալ դրամ ստացած էր:

\* \* \*

1701 Յունիսին ժանտախտը աւերներ կը գործէ Կ. Պոլսոյ մէջ եւ մեր ուղեգիրը կը վկայէ թէ տեսած է փողոցը ինկած երկու ժանտախտահարներ, որոնցմէ մէկը հայ<sup>18</sup>):

1701 Դեկտեմբեր 13-ին կը հասնի Նիկոմիդիա: «Բաժանմանս յաջորդ օրը, քաղաքին եւ շրջակայքին մէջ պտոյտ մը

17) Անդ՝ էջ 208:

18) Անդ՝ էջ 209: